ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ
(1915-1918 թթ.)

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ

Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի ցեղասպանությունը XX դարի մարդկության մեծագույն ողբերգությունն էր և հետագա ցեղասպանությունների նախանշանը: Օսմանյան Թուրքիան հասավ նրան, որ իր տարածության մի զգալի մասը «մաքրվեց» հայ քրիստոնյա տարրից, սակայն նրա վրա հավերժ ծանրացավ ոճրագործի պիտակը, որովհետև հայ ազգաբնակչության ցեղասպանության նախապատրաստումը և կազմակերպումը, ինչպես նաև արևմտահայ ազգաբնակչության աքսորը ամբողջովին ծրագրվեց և անցկացվեց այն ժամանակվա երիտթուրքական կառավարության և ոչ թե թուրքերի առանձին խմբերի կամ էլ քրդական ավազակախմբերի կողմից, ինչպես այժմ ճգնում են ապացուցել Թուրքիայի կառավարիչները և դիտնականները: Այդ մասին է վկայում Մշո հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանի՝ 1914 թ. նոյեմբերի 8-ին Կոստանդնուպոլսի պատրիարք Զտվեն արքեպիսկոպոս Եղիայանին ուղղված գրությունը, ուր նա մասնավորապես նշում է. «Ժամանակը վտանգներով հղի է, ժողովուրդը ամեն բանե զրկվիլ հանձն առած է. միայն թե կյանքի ապահովություն մը ունենա, բայց ո՞վ պիտի տա անոր ցանկալի ապահովությունը, կառավարությունը, այն է արդեն ամեն կերպ անկարգության և չարիքներուն աղբյուրը: Հանգամանքները կը հաստատեն, որ ժողովրդի այդ կասկածները անհիմն չեն:

Կառավարությունը իր վարվելակերպով հայտնի կընէ, որ հայերու վրայեն վստահությունը բոլորովին վերացած է և ինքն է, որ մութ տարրերը կը գրգռե և կը զինե հայերու դեմ:

Մոսուլի գերմանական հյուպատոս Պ. Հոլշտայնը, որ երեկ առաջնորդարան այցելեց, առանց վերապահության հայտնեց, թե կառավարությունը հայերին կը կասկածի, երկարորեն բացատրություններ տվինք և հայտնեցինք, թե կառավարությունը շատ կը սխալի տաճկահայերը ռուսահայերուն հետ համամիտ կարծելով:

Կամավորներ հասցնելու նպատակով կամ այդ պատրվակով կառավարությունը գող, ավազակ և սրիկաներ չմնաց, որ չզինե, օրերս Աասուններն, Խութեն, ասդին և անդին խումբ-խումբ զինված քրդական կամավորներ բերվեցան, որոնք հայերու դեմ գրգռված են, և ճամբու վրա հանդիպած հայ գյուղերը շատ վնասներ կրեցին: Հաստատուն նշաններ կան, թե կառավարությունը պատրվակ կը փնտրե գավառիս հայերը աղետներու ենթարկելու, և այս տագնապալի վիճակին հանդեպ չվարած, բացի երկնային պաշտպանությենեն՝ ուրիշ միջոց մը չենք տեսներ»[1]:

Հայերին կոտորում էին և աքսորում իրենց հայրենիքից ոչ միայն ազգային պատկանելության, այլև հավատքի համար: Բռնի թուրքացման մեթոդները կարող էին կիրառվել Օսմանյան Թուրքիայի ուրիշ ազգերի՝ քրդերի, արաբների, չերքեզների, մահմեդական վրացիների և այլոց հանդեպ: Սակայն այս ազգերը և ժողովուրդները չոչնչացվեցին: Հայերի դժբախտությունն այն էր, որ հայ էին, քրիստոնյա և հայ առաքելական

---

1 Զ ա վ ե ն ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս. Պատրիարքական հուշեր. Կահիրե, 1927, էջ 71:

եկեղեցու հետևորդներ: Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքիայում ամենուրեք կոտորածների առաջին հարվածներից մեկը ընկնում էր նաև հայոց եկեղեցու սպասավորների վրա: Արևմտահայ հոգևորականության հետ տեղի ունեցած ողբերգությունը մանրամասն նկարագրված է Կոստանդնուպոլսի Զտվեն պատրիարքի Ամերիկայի առաջնորդ Արսեն ծ. վարդապետ Վեհունուն 1916 թ. մարտի 30-ին ուղղված նամակում. «Առաջնորդներեն Կարնո Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանը իր ժողովրդին հետ դեպի Միջագետք տարված ժամանակ Քեմախի մոտերը հրոսակներու կողմե սպանված է: Տրապիզոնի Գեորգ ծ. վարդապետ Թուրյան Կարնո պատերազմական ատենին ղրկված ըլլալով ճամբուն սպանված է: Շապին Գարահիսարի Վաղինակ ծ. վարդապետ Թորեկյան քաղաքին ռմբակոծման ատեն զոհ գացած է: Բաբերդի Անանիա ծ. վարդապետ Հազարապետյան կախաղանի վրա իր հոգին ավանդած է տեղական վճիռով: Մշո Վարդան ծ. վարդապետ Հակոբյան բանտին մեջ բրածեծ մահացած է: Տիգրանակերտի Մկրտիչ ծ. վարդապետ Զլղատյան բանտի մեջ դանահար սպանված է: Եվդոկիո Շավարշ ծ. վարդապետ Սահակյան ձերբակալվելով Սեբաստիա ղրկված ատեն ճամբուն սպանված է: Խարբերդի Պսակ ծ. վարդապետ Տեր-Խորենյան չղթայակապ դեպ Տիգրանակերտ այլոց հետ ղրկված ատեն խողխողված է: Յողղատի Ներսես եպիսկոպոս Դանիելյան Սեբաստիո մոտերը Ալիսի ափերուն վրա ուրիշ 450 յողղատցիներու հետ սպանված է: Եդեսիո Արտավազդ ծ. վարդապետ Գալենտերյան քաղաքին մեջ սպանված է ուրիշ 60-70 հայերու հետ վերջին ջարդեն առաջ: Բալուի՝ Եղնիկ եպիսկոպոս Գալփաքճյանի, Բաղեշի՝ Սուրեն ծ. վարդապետ Գալեմյանի, Սղերդի՝ Եղիշե վարդապետ Զանոյանի, Զարսանճագի Գեորգ ծ. վարդապետ Նալբանդյանի, Երզնկայի և Քեմախի Մելիքսեդեկ վարդապետ Հովիվյանի, Սամսոնի՝ Համազասպ ծ. վարդապետ Եղեսյանի և Կյուրինի՝ Խորեն եպիսկոպոս Ռիմաքսյանի մահը ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կը մնան: Կեսարիո՝ Խոսրով եպիսկոպոս Պեհրիկյան մշտնջենական և Պրուսայի Պարգև ծ. վարդապետ Դանիելյան հնգամյա բերդարգելության դատապարտված են, սակայն հայտնի չէ, թե ուր կը դտնվին: Նիկոդիմիո Ստեփանոս եպիսկոպոս Հովակիմյան, Գոնիայի Գարեգին վարդապետ Խաչատրյան և Պանդրմայի՝ Կաբապետ եպիսկոպոս Մազլումյան տարագրված են իրենց հոտին հետ և առաջինը Հալեպ, Բ. Մամպիճ և Գ. Քելիսի Ազիզիե գյուղը: Ասոնցմե զատ ողջ մնացած Առաջնորդներեն են Գնել եպիսկոպոս Գալեմքեարյանը, որ կը մնա Սեբաստիա տան մը մեջ արգելափակ. Իզմիրի Մատթեոս եպիսկոպոս Ինճեյան և Հաճրնի Պետրոս եպիսկոպոս Սարաճյան իրենց վիճակներու մեջ: Զինայելով նույնիսկ Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը, որ նա Հալեպի քովերը Պապ աքսորվեցավ և ապա ղրկվեցավ Երուսաղեմ, ուր կը մնա այժմ»[2]:

Զավեն պատրիարքի բոլոր ջանքերը ինչ-որ ձևով կանխելու արևմտահայության կոտորածը դատապարտված էին անհաջողության: Նրա հանդիպումները Թուրքիայի արդարադատության և կրոնի նախարար Փիրիզադե Իբրահիմ բեյի, Մեծ Վեզիր Սայիտ Հալիմ փաշայի, երեսփոխանական ժողովի նախագահ Խալիլ բեյի, Օսմանյան կայսրության Շեյխ-ուլ-իսլամ՝ Մուսա Քեազիմ էֆենդիի, ներքին գործոց նախարար Թալեաթի հետ մնացին լոկ որպես զրույցներ: Պատրիարքի գայրույթը և խնդրանքները Թուրքիայի կառավարող օղակներում անտեսվեցին:

1914 թ. վերջերին Արևմտյան Հայաստանից գաղթող հայ փախստականների հոսանքն ուժեղացավ՝ սպառնալով վերածվել ազգային աղետի: Ոչնչացման և կոտորածի վախը ստիպեց հայ հազարավոր ընտա-

2 Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀՊՊԿԱ) ֆ. 57, ց. 5, գ. 21, թ. 72-74:

նիքների թողնել իրենց օջախները և շարժվել դեպի Արևելյան Հայաստան ու Կովկասի սահմանները:

1914 թ. դեկտեմբերի 28-ին իր թ. 1990 հայրապետական կոնդակով Գևորգ Ե-ն ստեղծեց Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողով, Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանի նախագահությամբ, որին հանձնարարում էր.

«Ա) Փութով ժողովել ի մի զամենայն տեղեկութիւն հայ գաղթականաց, որք ի պատճառ ռուս-տաճկական պատերազմի, թողեալ են զտունս և զստուացուածս իւրեանց և դտանին ի թշուառ կացութեան, ցրուեալք յայլ և յայլ տեղիս:

Բ) Քննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացուցչաց և վստահելի անձանց զվիճակ նոցա և զհետևանանցն յայտ առնել Մեզ ի տնօրէնութիւն:

Գ) Մտանել ի բանակցութիւն ընդ Յանձնաժողովս Եղբայրական օգնութեան, հաստատեալս Կոնդակօք Մերովք ի զանազան քաղաքս, տալով նոցա զկարեւոր տեղեկութիւնս վասն գաղթականաց և խնդրելով ի նոցանէ զտեղեկագիրս գործունէութեան իւրեանց, մատուցանել Մեզ ի գիտութիւն:

Դ) Միավորել զգործունէութիւնս ամենայն Յանձնաժողովոց Եղբայրական օգնութեան և, ի դէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի մէնջ կարևոր հրահանգս, հրավիրել աստ ի Ս. Էջմիածին զներկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն՝ վասն որոշելոյ ղընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց:

Ե) Խորհրդակցել պարբերաբար ընդ ներկայացուցիչս մերձակայ քաղաքաց և սահմանագլուխ աւանից վասն կանոնաւորապէս պահպանելոյ և բնակեցուցանելոյ զգաղթականս ի չրջակայ գիւղօրայս, յայսմ ցրտագին եղանակի:

Զ) Խնամել ըստ ամենայնի և տալ նոցա բժշկական օգնութիւնս, սվոփել և մխիթարել զնոսա հոգեպէս:

Է) Ստանալ ի Սինոդէ Ս. Էջմիածնի զժապաւինեալ մատեան և պահել զամենայն հաշիւ կանոնաւորութեամբ և կանխագոյն թույլտուութեամբ Մերով ստանալ ի գանձապանէ Մայր Աթոռոյս զանհրաժեշտ դրամս ի նուիրապետութեանց յօգուտ գաղթականաց»[3]:

Հետագայում Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգագիր հանձնաժողովի նախագահներն էին Բագրատ եպիսկոպոս Վարդաղարյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Գևորգ վարդապետ Զորեքչյանը և Զավեն վարդապետ Մահտեսի-Բաբայանը:

1914 թ. դեկտեմբերի 31-ին Եփրեմ եպիսկոպոսը դրում էր Երևանի փոխթեմական Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին. «Էջմիածնում ահռելի հեղեղ է, անընդհատ գալիս են նոր զանգվածներ՝ բոլորը սոսկալի պայմաններում: Չկան ազատ տեղեր, կարող են առաջանալ համաճարակ, հիվանդություններ:

Նորին Սրբության հովանու ներքո գտնվող Եղբայրական օգնության հանձնաժողովը խնդրում է Ձեզ առանց հետաձգելու խոսել նահանգապետի հետ, որպեսզի հեռագրով դավառապետին արվի անհրաժեշտ կարգադրություն, որպեսզի կարելի լինի փախստականներին անհապաղ ուղարկել գյուղերը: Մանրամասն անվանացանկ կազմել տեղերում ավագների կողմից»[4]:

1915 թ. հունվարի 5-ին Նախիջևանի փոխանորդ Սիոն վարդապետը հեռագրում էր Խորեն սրբազանին, որ Նախիջևանում կուտակվել են

3 «Արարատ», 1915, հ. 1, էջ 4-5:

4 ՀՀՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 28, թ. 3-5:

հազարավոր փախստականներ, որոնք կարիքի մեջ են, անոթի և սպասում են գնացքներին, որպեսզի մեկնեն Երևան[5]:

Երևանի թեմում ապաստանած փախստականների վիճակի մասին 1915 թ. հունվարի 17-ին Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովին Խորեն եպիսկոպոսը զեկուցում էր. «Մինչև օրս Երևան հասած փախստականներից քաղաքացիները տեղավորված են Երևանում, որոնց թիվը հասնում է 1500-ի, իսկ մյուսները տեղավորված են գանազան գյուղերում: Տեղիս գործադիր մարմինը ոչ մի ջանք չի խնայել բոլորին տաք շոր, անկողին, սնունդ և այլ հասցնելու: Փախստականների հոսանքը դեռ չի դադարել, շարունակում են գալ Պարսկաստանից և Թուրքիայից Էջմիածնի վրայով, որոնց տեղավորումը կատարվում է ամենայն արագությամբ»[6]: Փախստական հայության ամենամեծ մասը տեղավորվում էր Երևանին մերձակա գյուղերում՝ Քանաքեռ, Արամուս, Բաշգառնի, Շիրաբաթ և Նորագավիթ[7]:

Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգագիր հանձնաժողովի 1915 թ. հունվարի 24-ի նիստում որոշվում է. 1. կանոնավոր կազմակերպել դաղթական-փախստականներին խնամելու և կերակրելու գործը, 2. միանման և միաժամանակ անցկացնել վիճակագրություն, 3. դաղթականներին բաժանել հագուստ և անկողին, 4. ամենուր կազմակերպել բժշկական օգնություն, 5. դաղթականների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, բացել բաղնիքներ, 6. ամեն կերպ նպաստել անտեր ու չքավոր երեխաների խնամքին և ուսմանը, 7. աշխատանքի ընդունակների համար գործ և աշխատանք կազմակերպել, 8. ունենալ հատուկ չափբերական մատյան Թուրքիայից և Պարսկաստանից գաղթական-փախստականների համար և այլն[8]:

1915 թ. մարտի 14-ին Գևորգ կաթողիկոսը Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին հղեց թ. 412 կոնդակը, ուր մասնավորապես գրում էր. «Հնարավորություն չունենալով բոլոր քրիստոնյա ազգությունների փախստականների մասին ստույգ տեղեկություններ ներկայացնելու, ես կսահմանափակվեմ միայն Տաճկաստանից, Պարսկաստանից և Անդրկովկասի այլ տեղերից փախած գաղթականների մոտավոր թվի մասին տեղեկություններ հաղորդելով: Հայ փախստականների թիվը Էջմիածնում, ունեցած տվյալների համաձայն, 60 000 հոգուց պակաս չէ»[9]:

Մայրավանք եկած փախստականները միանգամից շրջապատվեցին վանական միաբանության խնամքով: Այստեղ կուտակվել էր մոտ 60 հազար փախստական հայություն: Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախագահող Տիրայր վարդապետին ուղղած իր նամակում Սինոդի անդամ և «Արարատի» խմբագիր Բարգեն վարդապետ Աղավելյանը գրում էր. «Գիտես, որ «Արարատի» ամբողջ գործն իմ վզին է, որքան հնարավոր է, աշխատում եմ, չնայած շուրջս սոսկալի տեսարան է ներկայացնում գաղթականությունը. ամբողջ օրը դրանցով զբաղված օրական 5-6 հազար մտնում և դուրս է գալիս, իսկ տեղում՝ Էջմիածնում, միշտ 60 հազարից ավելի լցված են, սոսկալի դրություն է, 3 հազարից ավելի որբեր ենք ժողովել Վեհարանում, որը վերածված է որբանոցի և հիվանդանոցի: Աշխատող ձեռք քիչ ունենք»[10]:

---

5 ՀՀՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 10, թ. 3:

6 ՀՀՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 28, թ. 13-14:

7 ՀՀՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 7, թ. 133:

8 ՀՀՊՊԿԱ, ֆ. 472, ց. 1, գ. 15, թ. 1:

9 ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1248, թ. 5-7:

10 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 126, վավ. 449:

Այն, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը տվեց զգալի զոհեր, անժխտելի փաստ է: Փախստականներից ժանտախտով վարակվեցին և մինչև 1915 թ. օգոստոսը մահացան Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգագիր հանձնաժողովի նախագահ և Սինոդի անդամ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանը, Մայր Աթոռի միաբան Վահան վարդապետը, մահից հազիվ փրկվեց Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովի անդամ Գարեգին վարդապետ Հովսեփյանը, իսկ Բաբգեն վարդապետ Աղավելյանը, որը ևս հանձնաժողովի անդամ էր ու Ս. Էջմիածնի որբանոցի կառավարիչը, 1915 թ. դեկտեմբերի 27-ին որբերից վարակվելով, վախճանվեց 1916 թ. հունվարի 3-ին[11]:

Շուտով Հալեպից Մայր Աթոռում ստացվեց Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի նամակը, ուր նա մասնավորապես հաղորդում էր. «Տիգրանակերտ գնացողներեն լուր չկա, դժոխք գնացողներու պես: Այնթապի գաղթն ալ ազդարարվեցավ: Այս գիշեր 51 ընտանիք հասան: Այս կողմեն քաղաքաց հայ բնակչությունը Գամասկոսի Հավրան (կամ Հորան) գավառը կը տեղափոխեն: Ուրֆայեն ալ, թերևս Տիգրանակերտեն 800 հոգի հասնելու վրա են: Խարբերդեն բերվածները Ռաս-էլ-Այնէն, ուղղակի Տերզոր կղրկվին: Հիվանդությունը համաճարակ է: Երկիցս դեղ ու նպաստ ղրկեցավ, բայց կաթիլ մը օվկիանոսի մեջ: 20 000 և ավելի են այդ գավառի գաղթականք, Հալեպի մեջ համախմբված են ավելի քան 15 000 և օրեցօր հեղեղի նման կը հասնին:

Անոթությունեն հիվանդության չափ կոտորած կլինի: Պարեն Հալեպի մեջ գրեթե կանոնավորապես կտրվի, բայց դուրսերը հաց կաղաղակեն: Կամ փրկարար հրաշագործ զորությունը ու կամ թագավորական գանձ պետք է, որ կես միլիոն կիլիկեցիք թերևս այնչափ կամ ավելի արևելյան գավառներից կարենան կերակրվեն անապատների մեջ:

Աշխարհ տեսած չէ և պիտի չտեսնե այսքան արհավիրք, այսքան թշվառություն ու կորստություն: Երուսաղեմի ավերը բախտավորություն է հայության բաղդատմամբ՝ ավերած, կոտորած, բռնությունք երկսեռ մանուկներու, անհետացում, անհամար առևանդություն»: Հաղորդման վերջում նորին սրբությունը գրում էր. «Ինչ պիտի ըլլան վանքերն ու մենաստանները, սուրբ սպասները, գրքերն ու զգեստները՝ Խորհուրդ տվեք, մենակ եմ: Խելք չմնաց գլուխս, արտասուք չմնաց աչքերուս մեջ, զգացում չմնաց սրտիս մեջ: Զորս կողմս զիշեր ու ցերեկ մերկություն, անոթություն, նվաղում, լաց ու վայնասուն»[12]:

Այս հաղորդումը ստանալուն պես Գևորգ Ե-ը թուրքական կառավարության՝ հայ ժողովրդին բնաջնջելու և Հայաստանից ու Կիլիկիայից Իկոնիա ու Միջագետք նրա արտաքսումը կազմակերպելու ծրագրի մասին հայտնում է Պողոս Նուբար փաշային: Ամենայն հայոց կաթողիկոսի անունից նրան առաջարկվում էր բողոքել «դաշնակից և չեզոք պետություններին, որպեսզի խանգարեն այդ դժոխային ծրագրի» իրագործմանը:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության կապակցությամբ Կովկասի ռազմաբեմից ռուսական զորքերի մեկնելուց ու թուրքական զորքերի առաջխաղացումից անմիջապես հետո սկսվում է արևմտահայերի կոտորածի նոր փուլը: 1918 թ. մայիսի 15-ին, խախտելով զինադադարը, թուրքական բանակը հարձակման անցավ Ալեքսանդրապոլի վրա: Այս հարձակումը քաղաքում խուճապ է առաջացնում: Տեղի ազգաբնակչությունը հազիվ է հասցնում փախչել դեպի Ղարաքիլիսա: Այս իրադարձության մասին Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետ Սմբատյանը Գևորգ կաթողիկոսին հղած իր զեկուցման մեջ գրել է. «Մի սոսկալի պատ-

---

11 *ՄՄ, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 446: «Արարատ», 1916, հ. 1-2, էջ 48:*

12 *ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1278, թ. 12:*

կեր էր ներկայացնում Ղարաքիլիսան: Ամբողջ գաղթականությունը Ալեքսանդրապոլի շրջանի մեծ մասամբ դուրսը, բաց դաշտում, մնացել էր քաղցած, անձրևի տակ: Մարդիկ, անակնկալի գալով, չէին կարողացել մինչև անգամ հաց վերցնել, նույնիսկ փողերն էին մոռացել և ոսկիները»[13].

Ղարաքիլիսայում գտնվող հայ փախստականությանն օգնելու նպատակով Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նախագահությամբ Արտակարգ հանձնաժողով է ուղարկում Ղարաքիլիսա: 1918 թ. Ղարաքիլիսան գրավելուց հետո թուրքերը կոտորում են 2000-ից ավելի տղամարդ, կին և երեխա: Մինչև հունիսի 3-ը Ղարաքիլիսայում գերի տարված հայ զինվորներին և խաղաղ ազգաբնակչությանը թուրքերը քշում էին անտառ և գնդակահարում[14]: Սանահինում կուտակված հայերին 13 գնացքով տեղափոխում են Թիֆլիս, իսկ մնացածներին, հիմնականում երեխաներին, փրկելու համար Մեսրոպ սրբազանը մի գերմանացի սպա և տասը զինվոր է ուղարկում, որպեսզի հավաքեն այդ որբ երեխաներին և խնամեն:

Ղարաքիլիսայի դեպքերից հետո Մեսրոպ սրբազանը մեկնում է Թիֆլիս և հանդիպելով Կովկասում գերմանական պատվիրակության անդամների հետ նրանցից օգնություն է խնդրում, որպեսզի սովամահության մատնված կես միլիոն հայ փախստականներին թույլատրվի մի քանի օրով գնալ «Իգդիր և Դարվալու» իրենց հասունացած ցորենը հավաքելու համար: Սակայն Մեսրոպ սրբազանի այս առաքելությունն ավարտվում է ապարդյուն:

1918 թ. հուլիսի 31-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում գերմանա-ավստրո-հունգարական պատվիրակությունը գեներալ Ֆոն Կրեսի և Կովկասում Ավստրո-Հունգարիայի դեսպան բարոն Ֆրանկենշտայնի գլխավորությամբ: Հանդիպման ժամանակ Գևորգ կաթողիկոսը նրանց է փոխանցում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին ուղղված իր կոնդակները, ուր Վեհափառ Հայրապետը մասնավորապես գրում էր. «Խորապես մտահոգված իմ ժողովրդի ծանր ճակատագրով, համարձակվում եմ Ձերդ մեծությանն անհանգստացնել իմ խնդրանքով:

Ներկա պատերազմը առանձնապես ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի վրա: Թուրքահայաստանի բոլոր շրջաններն ամայացվեցին հայ բնակչությունից: Նրանց մեծ մասը ջարդվեց Թուրքահայաստանում կամ ոչնչացվեց բազմապիսի զրկանքներից և հետապնդումներից: Ողջ մնացածները ապաստանեցին հիմնականում նորակազմ, անկախ Հայաստանում կամ սահմանամերձ վայրերում: Թուրքերը տիրեցին տեղահանված հայերի ողջ սեփականությանը, բերքով հանդերձ: Նոր հայկական պետության շրջաններում փախստականների թիվը հասավ մոտ կես միլիոնի: Բացի այդ Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում ապաստանել են մոտ 300 000 հայեր:

Զրկված սնվելու հնարավորություններից, թափառելով բաց երկնքի տակ, մատնված անտանելի ցրտին և զրկանքներին, որի հետևանքով բազում զոհեր եղան...»: Իր կոնդակի վերջում Նորին Սրբությունը կայսրերից խնդրում էր «ամենաողորմած օգնության ձեռք մեկնել կործանվող ժողովրդին»[16]: Սակայն ո՛չ գերմանական և ո՛չ ավստրո-հունգարական կայսրերը ոչնչով չօգնեցին հայ ժողովրդին:

Եղեռնը անսահման մեծ կորուստներ պատճառեց հայ ժողովրդին: Հայ եկեղեցին, հնարավորություն չունենալով ինչ-որ ձևով կանխել եղեռ-

13 ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, գ. 5, գ. 176, թ. 10:

14 ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 176, թ. 3-4:

15 ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 182, թ. 1-2:

16 Հունգարիայի պետական արխիվ, հ. 1112, թ. 92-93 (նյութը տրամադրել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյանը):

նը, իր վրա վերցրեց փախստականների խնամքի և պահպանության գործը և ամեն հնարավորը գործադրեց արևմտահայոց բեկորներին օգնելու համար:

ГЕНОЦИД АРМЯН И АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ (1915—1918 гг.)

СТЕПАН СТЕПАНЯНЦ

Резюме

Геноцид армян в годы первой мировой войны явился величайшей трагедией и предвестником последующих геноцидов XX века. В статье на основе нововыявленных архивных материалов освещается деятельность армянской апостольской церкви в период геноцида армян в годы первой мировой войны. Показывается деятельность первопрестольного Эчмиадзина в деле оказания помощи многочисленным армянским беженцам.